Հանձնաժողովի՝ շրջիկ (տեղափոխվող) քվեատուփը տանող անդամի գործառույթները

- Շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի միջոցով քվեարկության ընթացակարգը սկսվում է քվեարկության օրվա ժամը 9-ից և ավարտվում է ժամը 19-ին:
- Քվեարկության օրվա ժամը 9-ից հանձնաժողովի նախագահը Ձեզ պետք է փոխանցի.
  - ✓ շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակը,
  - ✓ ընտրողների գրանցումն իրականացնողի ստորագրությամբ և գրանցումն իրականացնողի կնիքով վավերացված անհրաժեշտ քանակությամբ համապատասխան տեսակի քվեաթերթիկներ,
  - ✓ հատուկ ծրարներ (շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակում առկա ընտրողներին համապատասխան),
  - ✓ կնքված շրջիկ (տեղափոխվող) քվեատուփը, որում պետք է զետեղված լինի ստուգողական թերթը,
  - ✓ շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ճեղքի համար հատկացված կնիքը (տեղափոխվող քվեատուփը կնքվում է շրջիկ (տեղափոխվող) քվեատուփով ընտրությունն ավարտվելուց հետո):

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Շրջիկ (տեղափոխվող) քվեատուփը ուղեկցող տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները շրջիկ (տեղափոխվող) քվեատուփով քվեարկության գործընթացում պետք է ապահովված լինեն դիմակով, դիմավահանով, ձեռնոցներով և ձեռքի ախտահանիչ լուծույթով:

- Ընտրողին մոտենալիս խնդրե՛ք նրան ներկայացնել Վրաստանի քաղաքացու ինքնությունը հաստատող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը:
- Համեմատե՛ք ընտրողի անձնական համարը շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակում ընդգրկված անձնական համարի հետ:
- Ստուգե՛ք ներկայացված անձը հաստատող փաստաթղթում նշված ընտրողի գրանցման տվյալների և շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակում առկա տվյալների համապատասխանությունը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Եթե ընտրողների համապատասխան ցուցակում Վրաստանի քաղաքացու անձնական համարի, սեռի և լուսանկարի հետ մեկտեղ, ամբողջությամբ համապատասխանում են ցուցակում առկա տվյալներից (անուն, ազգանուն, ծննդյան ամիս, ամսաթիվ, տարեթիվ, հասցե) գոնե երեքը, ընտրողը մասնակցում է քվեարկությանը:

- Շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակում ստորագրությամբ վավերացրե՛ք քվեաթերթիկ/քվեաթերթիկներ տրամադրելը:
- Խնդրե՛ք ընտրողին շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակում իր ազգանվան երկայնքով ստորագրությամբ հավաստել քվեաթերթիկը/քվեաթերթիկները ստանալը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ

Եթե քվեարկության ընթացքում պարզվի, որ ընտրողը ընտրացուցակում ստորագրել է այլ ընտրողի ազգանվան դիմաց գտնվող սյունակում, նման դեպքում ընտրողին, որի ազգանվան դիմաց արձանագրված է ստորագրությունը, պետք է ցուցում տաք ստորագրելու նույն սյունակում: Միևնույն ժամանակ, նշվածի վերաբերյալ պետք է բացատրագիր գրեք (ընտրողի անվան և ազգանվան և ցուցակում նրա հերթական համարի մատնանշմամբ):

- Ընտրողին փոխանցե՛ք, ընտրողների գրանցումն իրականացնողի ստորագրությամբ և գրանցումն իրականացնողի կնիքով վավերացված, ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները:
- Ընտրողի կողմից քվեաթերթիկը/քվեաթերթիկները լրացնելուց հետո, նրան մատնաշե՛ք, որ վերցնի հատուկ ծրարը և նրա մեջ զետեղի ծալված քվեաթերթիկները:
- Ընտրողին խնդրե՛ք ծրարը գցել շրջիկ (տեղափոխվող) ընտրական քվեատուփի մեջ:
- Քվեարկության ավարտից հետո շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ճեղքն այնպես կնքե՛ք, որ անհնար լինի, առանց կնիքը վնասելու, այն բացել:
- Ոչ ուշ, քան մինչև քվեարկության օրվա ժամը 20-ը շրջիկ (տեղափոխվող) ընտրական քվեատուփը վերադարձրե՛ք ընտրական տեղամաս:
- Քվեարկության շենք վերադառնալուց հետո, հանձնաժողովի քարտուղարին փոխանցե՛ք չօգտագործված/վնասված քվեաթերթիկները, հատուկ ծրարները և հանձնաժողովի անդամների բացատրագրերը (այսպիսինի գոյության դեպքում):

Նկատի՛ ունեցեք.

- ✓ Շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի միջոցով քվեարկությանը մասնակցող ընտրողների հանդեպ չի կիրառվում նշմարում:
- ✓ «Ֆիզիկական վիճակի» պատճառով ընտրողի կողմից շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի միջոցով քվեարկության դեպքում, շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակի «Ընտրողի ստորագրություն» սյունակում արե՛ք գրառում՝ «ֆիզիկական վիճակ» և նշվածը հավաստե՛ք ստորագրությամբ:
- ✓ «Ֆիզիկական վիճակ» ունեցող ընտրողի (նաև այն ընտրողի, որն ինքնուրույն չի կարող լրացնել քվեաթերթիկը) փոխարեն, նրա ներկայությամբ, քվեաթերթիկը լրացնում, հատուկ ծրարի մեջ է զետեղում և ծրարը շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի մեջ գցում նրա կողմից ընտրված անձը (բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամի, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցչի և դիտորդի):
- ✓ Եթե խախտվել է շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի կնիքի ամբողջականությունը, այդ մասին անհապաղորեն տեղեկացրե՛ք հանձնաժողովի նախագահին, կազմե՛ք բացատրագիր՝ պատճառի նշմամբ և ստորագրել տվեք ուղեկցող անձանց: